



Հրատարակուել է  
Գալուստ Կիլպենկեան հիմնարկութեան  
հովանաւորութեամբ

# ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

ԹԻԻ 1-12

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՃԼԱ. ՏԱՐԻ 2017

## ԴՈՒԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՁԵԻԱԻՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Գալիանտ Քոչարեան

Դուին բազմաշերտ (Ք. ա. III հազ. - Ք. յ. ԺԳ. դ.) յուշարձանի ուսումնասիրութեան ներկայ մակարդակը հնարաւորութիւն է ընձեռում հետեւելու հնավայրի ձեւաւորման ընթացքին, տալու դրա շարունակական զարգացման ամբողջական պատկերը եւ բացայայտելու կազմաւորման կենսական գործոնները<sup>1</sup>:

Արարատեան գոգաւորութեան բնական պաշտպանութեանը հզօրացնող հովիտը շրջապատող լեռնալանջերին շրջանաձեւ, իսկ գետահովիտների երկայնքին գծային շարքով դասաւորուած, լեռնանցքների ու դարպասների մօտ խմբուած ամրոցների լայն ցանցում Դուին ամրոցը՝ Գեղամայ լեռնավահանի արեւմտեան լանջին ուրուագծուող, էլաո-Դարանից ձգուող Հացաւան-Գառնի-Տիկնունի պաշտպանական աղեղի մասն էր կազմում<sup>2</sup>:

Դուին հնավայրի ցարդ յայտնի հնագոյն շերտը թուազրուած է Ք. ա. III հազ. երկրորդ կէսից ոչ ուշ: Վաղբրոնզեդարեան բնակատեղին հիմնուել է Արարատեան գոգաւորութեան հիւսիսարեւելեան հատուածում՝ Երասխ-Մեծամօր-Ազատ գետերի բարեբեր հովտում, հիւսիսային թիկունքից՝ Տիկնունիի բարձունքով, արեւմուտքից՝ Ազատ գետով, արեւելքից՝ Ուրծի լեռնաշղթայի բազուկներով լաւ պաշտպանուած Դուին բլրի վրայ: Տեղանքի՝ «բլուր, գետ, դաշտ» համալիր սկզբունքով կատարուած ընտրութիւնը բնակավայրի համար ապահովում էր գերիշխող դիրք, լայն տեսադաշտ շրջակայ հարթավայրի վրայ, ջրային պատուար, ջրամատակարարում, ոռոգում, արգաւանդ հողեր: Բլրի գագաթի հարթակը Ք. ա. I հազ. սկզբին օղակող պարսպազօտու գետնախարսի քարաշէն շարուածքի անմշակ, զանգուածեղ քարերն ակնյայտօրէն կրկնակի օգտագործուած են: Այս քարերն ամենայն հաւանականութեամբ պատկանել են Ք. ա. III հազարամեակում պաշտպանութեանը ուժեղացնելու նպատակով տուեալ հարթակի բնական եզրագծով կառուցուած կիկլո-

1 Բուն յօդուածում ամփոփում է հնավայրի ձեւաւորման ընթացքը՝ Ք. ա. III հազ. Ք. յ. Դ-Ե. դդ. մերտեալ:  
2 Գ. Քոչարեան, Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում, «Հանդէս ամսօրեայ», 1996, թիւ 1-12, էջ 336-345:

պեան պարսպին (Հմմտ. էլլառ-Դարանի, Գառնի եւ այլն)<sup>3</sup>:

Յաջորդող վերին մշակութային շերտերի պահպանութեան անհրաժեշտութեամբ պայմանաւորուած՝ Դուինի վաղբրոնզեդարեան շերտի հզօրութեան, ժամանակագրական հորիզոնների հնագիտական իրական պատկերի վերականգնումն այժմ անհնար է: Այնուհանդերձ զարգացման տուեալ շրջափուլում Դուինը՝ Այգեվանի, Զրահովտի, Շենգավիթի, Գառնու, էլլառ-Դարանի վաղբրոնզեդարեան բնակատեղիների հետ ներգրաւուած էր տնտեսական եւ մշակութային փոխկապակցութիւնների միեւնոյն ոլորտում:

Ք. ա. III հազ. երկրորդ կէսի վաղբրոնզեդարեան մշակութային նստուածքներ փաստագրուել են բլրի հիւսիսարեւելեան լանջին՝ շերտագրական հետախուզահորում, վաղերկաթեդարեան հորիզոնների տակ (գագաթի եռանկիւնաչափական Օ-ական կէտից՝ 12 մ խորութեան վրայ<sup>4</sup>): Հիւսիսարեւմտեան եւ արեւմտեան լանջերին բացուել են հում աղիւսէ պատերի, յատակների մնացորդներ, յայտնաբերուել են օջախի կաւէ յենակներ, տակդիրներ, «եռոտանի պատուանդան», սայլանիւի մանրակերտներ, սեւ, կարմիր, դարչնագոյն փայլեցուած մակերեւոյթով, բաց երանգի աստառով խեցանօթներ (ուսկանման, կիսազնդածեւ կանթերով տարբեր չափերի թաս-քրեղանների, թաղարների, գաւաթկճուճների, կճուճների, կարասների բեկորներ՝ յարդարուած մատնեքազարդ, փորագիր, ակօսուած, ներճկուած-ուռուցիկ բազմազար պարոյրներով, համակենտրոն

շրջաններով, թռչնանման զարդերով), ի յայտ են եկել քարէ կոկիչ, պահանգաւոր մանգաղի վանակատէ ու կայծքարէ ներդիրներ, աղօրիքներ, սանդղկօթեր, տրորիչներ, յեսանաքար, իլիկի գլխիկներ, ոսկրէ հերուն, կայծքարէ, վանակատէ, ոսկրէ նետասլաքներ, բրոնզէ ասեղ: Արեւմտեան լանջի ստորին մասում բացուել է հիմնահորային թաղում (վատ պահպանուած կմախք, վարդագոյն աստառով, սեւ եւ կարմիր փայլեցուած մակերեւոյթով խեցանօթներ), առանձին խեցատներ են յայտնաբերուել բլրի ստորոտին եւ շրջակայքում<sup>5</sup>:

Հնագիտական գտածոների տարածուածութիւնը ընդգրկում է ամբողջ բլուրը եւ յարող հարաւարեւմտեան տարածքը, ինչը հաւաստում է Ք. ա. III հազ. երկրորդ

5 Դուինի վաղբրոնզեդարեան մշակութային շերտը ներկայացուած է ըստ՝ Ե. Байбуртян, Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, 2011, с. 39; Է. Վ. Խանգաղեան, Հայկական լեռնաշխարհի մշակոյթը մ. թ. ա. III հազարամեակում, Երեւան, 1967, էջ 13-14. Կ. Խ. Кушнарева, Древнейшие памятники Двина, Ереван, 1977, с. 5-10; Փ. Бабалян, Результаты раскопок нижней крепости, - В кн.: Н. Г. Акопян, Ф. С. Бабалян, А. С. Жамкочян, А. А. Калантарян, К. К. Кафадарян, Г. Г. Кочарян, Двин IV, Город Двин и его раскопки (1981-1985 гг.), Ереван, 2008, с. 96-97: Կենտրոնական թաղամասում 1988 թ. միանաւ բազիլիկ տաճարը վերստին պեղելիս «գտնուել են մ. թ. ա. 3-րդ հազ. խեցեղէն ցիւրեր, անօթների հետաքրքիր ձեւեր, որոնք Դուինում հանդիպում են առաջին անգամ» (տե՛ս Ա. Ա. Քալանթարեան, Կ. Կ. Ղաֆաղարեան, Պեղումներ Դուինի VII դ. կաթողիկոսարանի եւ V դ. միանաւ բազիլիկի տարածքում, - Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Երեւան, 1989, էջ 67: Ի լրումն նշենք, որ 2012 թ. բլրի գագաթի հարթակի հարաւարեւելեան տարածքում, պարսպագօտու քարաշէն գեոմախարախի մնացորդները պեղելիս յայտնաբերուել են վաղբրոնզեդարեան փայլեցուած սեւ մակերեսով, կարմիր աստառով խեցատներ եւ սեւ մակերեսով, կարմիր ներկուած շեշտակի դուրս ցցուած շուրթով, նարնջագոյն աստառով գունազարդ խեցանօթի վերնամաս:

3 Է. Վ. Խանգաղեան, Էլլառ-Դարանի, Երեւան, 1979, էջ 13-14. Առնի՝ Գառնի IV, Պեղումների արդիւնքները 1949-1966 թթ., Երեւան, 1979, էջ 7:  
4 Փլուզումներից խուսափելու համար հետախուզահորում 14 մ խորութեան վրայ պեղումները դադարեցուել են (տե՛ս Կ. Ղաֆաղարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, հտ. II, Երեւան, 1982, էջ 19-21:

կէսին այստեղ բաւական ընդարձակ բնակավայրի գոյութիւնը: Ուրուագծուած է բնակչութեան կենսապահովման հիմնական բնագաւառների (երկրագործութիւն, անասնապահութիւն) եւ տնտեսավարման համար անհրաժեշտ արհեստագործական ճիւղերի առկայութեան ընդհանրական աղօտ պատկեր: Վաղբրոնզեդարեան յուշարձաններում (Հմմտ. Մոխրաբլուր, Հառիճ, Զրահովտ, Շենգավիթ եւ այլն)<sup>6</sup> ծիսական արարողութիւնների համընդհանուր սրբատեղիի առկայութեան իրողութիւնից ելնելով, հնարաւոր է Դուինում եւս ենթադրել, ընտանեկան սրբարաններից (օջախներ, յենակներ եւ այլն) գատ, նման ընդհանուր սրբատեղիի գոյութիւն:

Արարատեան գոգաւորութեան պաշտպանական համակարգի ամբողջական պատկերն ուրուագծուած է դեռեւս Ք. ա. II-I հազ. սահմանագլխին<sup>7</sup>: Այս շրջանում համակարգի ինտենսիւ համալրման իրողութիւնը պայմանաւորուած էր Վանի թագաւորների արշաւանքներին միացեալ ուժերով դիմադրաւելու, սեփական անկախութիւնը պահպանելու, ինչպէս նաեւ միջազգային առեւտրի, միաժամանակ եւ ռազմավարական կարեւորութեան հիւսիսային մայրուղին վերահսկելու էթիոնեան համադաշնութեան ռազմաքաղաքական շահաւէտութեամբ:

Ոստան Հայոց գաւառի մօտաւոր սահմաններում (Հին Արտաշատի եւ ներ-

կայիս Զրահովտ, Մրգանուշ, Արեւշատ, Այգեստան, Այգեվան գիւղերի տեղում) ցարդ յայտնի էթիոնեան՝ վաղերկաթեդարեան ժամանակաշրջանի բնակատեղիների<sup>8</sup> շարքում առանձնանում էր Դուին ամրոցսրբավայրը՝ որպէս «արքունի քաղաք»<sup>9</sup>: Այս տիրոյթում էին հատուած դէպի հիւսիս եւ արեւմուտք ճիւղաւորուող՝ գոգաւորութեան հարաւային դարպասներից (Հայկական Պարի Կուշաղի լեռնանցքից) դէպի Երասխի ձախափնեայ հովիտ եւ արեւելեան մուտքից (Իրանական սարահարթից) Երասխի հոսանքն ի վեր ձգուող գլխաւոր մայրուղիները: Քննուող շրջանի վարչաքաղաքական կառավարումն իրականացնող Դուին «արքունի քաղաքը» գերիշխող իր բարձունքից հարեւան բնակավայրերի հետ վերահսկում էր տնտեսական եւ ռազմավարական այս նշանակալի հանգոյցի տարածքը: Դուին ամրոցի հարաւարեւելեան աշտարակի<sup>10</sup> դէպի Արտա-

6 Տե՛ս Կ. Խ. Кушнарева, Древнейшие памятники Двина, с. 41-42. Է. Վ. Խանգաղեան, Զրահովտի պեղումների արդիւնքները, - Հայաստանի Հանրապետութիւնում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Երեւան, 1991, էջ 11-12. Է. Սիմոնեան, Ծենգաւիթ. շարքային բնակավայր, թէ՞ վաղ քաղաք, - «Յուշարձան» տարեգիրք, Ը, Երեւան, 2013, էջ 20-34:  
7 Գ. Քոչարեան, Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում, էջ 336-345, 353-354:

8 Վաղ երկաթի դարաշրջանի յուշարձանների թուագրութեան մասին մանրամասն տե՛ս Է. Գ. Աւետիսեան, Պ. Ս. Աւետիսեան, Արարատեան դաշտի մշակոյթը մ. թ. ա. XI-VI դարերում, Երեւան, 2006, էջ 50-54:  
9 Է. Խանգաղեանը ուրարտական արձանագրութիւնների տուեալների համեմատական վերլուծութեամբ եզրակացնում է, որ Էթիոնի կազմում գտնուող իրաքանչիւր երկիր (շրջան, իշխանութիւն) «ունեցել է իր գլխատը, կենտրոնական քաղաքը, հաւանաբար վարչաքաղաքական կենտրոնը, որոնց ուրարտացիները անուանում են արքունի քաղաք», այս եւ Դուին «արքունի քաղաքի» մասին մանրամասն տե՛ս Է. Վ. Խանգաղեան, Էլլառ-Դարանի, էջ 125-127 եւ այլն: Հին Արտաշատի տարածքում յայտնաբերուած վաղերկաթեդարեան բնակավայրի մասին տե՛ս Մ. Զարդարեան, Է. Մանուկեան, Ա. Տոնիկեան, Նոր յուշարձան հին Արտաշատի տարածքում, - Հայաստանի Հանրապետութիւնում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզիսներ, Երեւան, 1991, էջ 54-56:  
10 Բլրի գագաթի հարթակը օղակող պարսպագօտու աղճատուած մնացորդների հարաւարեւելեան հատուածում ուրուագծում են քառակիւն յատակագծով աշտարակի կիսաւեր հիւքեր (եր-

շատի բլուրներ եւ Երասխ գետ դիրքորոշումը ակնյայտորէն թելադրուած էր այդ ուղիների կարեւորութեամբ:

Բլրի Ք. ա. III հազ. երկրորդ կէսի եւ Ք. ա. I հազ. վերջի շերտերի միջեւ փաստագրուել է Ք. ա. Ժ.-Ը. դդ. վաղերկաթե դարեան մշակութային շերտ (2,0մ ընդհանուր հզօրութեամբ երեք շինարարական հորիզոն): Հատուածաբար բացուել են գագաթը շրջափակող պարիսպ (կաւէ շաղախով ամրացուած, քարաշէն գետնախարսխի եւ հում աղիւսէ վերնամասի մնացորդներ), բլրի հարթակին եւ ստորոտին շինութիւններ (կաւաշաղախով կապակցուած զանգուածեղ քարէ սալերով հիմնապատերի մնացորդներ), մէկ տասնեակ սրբարաններ (պատկերազարդ կաւէ զոհարաններ, ծիսական խեցանօթներ, կոռքեր), սրանցից երկուսի միջեւ՝ ընդարձակ մետաղամշակման եւ ոսկերչական արհեստանոց (հնոց, կաւէ երկհիւղանի փուքս, բրոնզէ ձուլակտորներ, նետասլաքներ եւ պերճանքի մանր առարկաներ ձուլելու քարէ ու կաւէ կաղապարներ, պատրաստի արտադրանք՝ զէնք, գործիքներ, զարդեղէն)<sup>11</sup>, բլրից մօտ 300մ դէպի արեւելք դամբարանադաշտի մնացորդներ՝ կրոմլեխներ մահարձաններով (թուխ եւ շիկաւուն տուֆէ ջարդոտուած արձանների առանձին գլուխներ, կանանց իրաններ, հանդերձաւորուած զինուորի իրան, ֆալլատիպ կոթողներ)<sup>12</sup>:

կար.՝ 5,0 մ, ելուստը՝ մօտ 2,0 մ) (տե՛ս Գ. Քոչարեանի 1989 թ. դաշտային օրագիրը, պահում է Դուիմի հնագիտական արշաւայանի գրադարանում):  
11 Դուիմի վաղերկաթեդարեան մշակութային շերտը ներկայացուած է ըստ՝ К. X. Кушнарева, Древнейшие памятники Двина, с. 10-39.  
12 Գ. Գ. Քոչարեան, Արտայայտման շերտերի ռեաբանակալ վերլուծութեամբ թուագրման փորձ, «Աշտանակ» (հայագիտական պարբերագիրք), Բ, Երեւան, 1998, էջ 154-161. նոյնի, Դուիմի մահարձանի պատկերագրութիւնը տեղեկատու վաւերագիր, «Նոր ազգագրական հանդէս», Ա, Գիտական աշխատութիւններ, Երեւան, 2005, էջ 94-99 (հմմտ. Օսմիրամի,

Ամբողջ բլրով մէկ վաւերացուել է Ք. ա. Ը. դ. առաջին քառորդին հիմնադրուած կործանուած ու հրկիզուած ամրոց-սրբավայրի վերին շիկակարմիր մոխրաւատ հորիզոնը (կրակի մէջ թրծուած, ալ կարմիր գոյն ստացած հում աղիւսների կտորտանք, այրուած գերաններ) եւ աւերուած դամբարանադաշտը՝ ջարդոտուած մահարձաններով:

Դուիմի վաղերկաթեդարեան շերտում բացայայտուած պաշտամունքային հարուստ նիւթը հաստատուած է այստեղ տաճարախիտ սրբավայրի գոյութիւնը, ուստի եւ՝ բնութեան կենսական ուժերի զարթօնքի, դարբնի ու դարբնոցի պաշտամունքի եւ այլնի<sup>13</sup> ծէսեր կանոնակարգող քրմական դասի ներկայութիւնը: Վերջինիս հովանու ներքոյ էր իրականացուած սրբարաններին կից արհեստանոցների բազմաճիւղ արտադրական գործունէութիւնը (Հմմտ. Մեծամօր<sup>14</sup>):

Ախթամարի վաղերկաթեդարեան դամբարանադաշտերի մահարձանները. տե՛ս Գ. Յ. Արեշեան, Օսմիրամի յուշարձանայանի 1975-76 թթ. ուսումնասիրութեան նախնական արդիւնքները, Հայկական ՍՍՀ-ում 1975-1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1977, էջ 13-14. Լ. Գ. Աւետիսեան, Պ. Ս. Աւետիսեան, Արտայայտման դաշտի մշակոյթը մ. թ. ա. XI-VI դարերում, էջ 12-13 եւ այլն): Ի լրումն նշենք, որ յիշեալ յուշարձաններում, աւանդական արտայայտչամիջոցների արխայիկ արուեստին բնորոշ պահպանողականութեամբ հանդերձ, ակնյայտ է մահարձանների ոճի զարգացման փուլերի առկայութիւնը:

13 Դուիմի վաղերկաթեդարեան շերտում յայտնաբերուած նիւթերի պատկերագրութեան ուսումնասիրութեամբ վերականգնում են պաշտամունքային պատկերացումների որոշակի ոլորտներ՝ պտղաբերութեան-արգաստորութեան, փացահատի ու խաղողի, գինու սրբազորման, որսի եւ այլն (տե՛ս К. X. Кушнарева, Древнейшие памятники Двина, с. 49-79):  
14 Տե՛ս Է. Վ. Խանգաղեան, Կ. Լ. Մկրտչեան, Է. Ս. Պարսամեան, Մեծամօր, Երեւան, 1973, էջ 186-187:

Հասարակութեան մէջ քրմական վերնախաւի ունեցած դերի կարեւորութիւնը հաւաստուած են նաեւ դամբարանադաշտում յայտնաբերուած ջարդոտուած մահարձանների՝ իշխանութիւն խորհրդանշող մեծալանքի տարբերանշաններ կրող գլուխները<sup>15</sup>: Պաշտամունքային եւ ամրաշինական այս խոշոր կենտրոնի պաշտպանութիւնը իրականացնում էին իշխանքրմապետ զօրավարները:

Մաղկող վաղերկաթեդարեան քաղաքակրթութեան զարգացումը խաթարուել էր Վանի թագաւորութեան կողմից էթիոպիկ նուաճմամբ: Դեռեւս Ք. ա. Թ. դ. վերջերին գրաւելով Արարատեան գոգաւորութեան հարաւային դարպասներն ու վերականուցելով կիլիկիական ամրոցները՝ Վանի տիրակալները Մասիսի հիւսիսային ստորոտին ստեղծել էին յուսալի պլանցարմ<sup>16</sup>: Նրանք, Երասխի ձախափնեայ Երնջակի գետահովտում<sup>17</sup> յաղթահարելով Արարատեան գոգաւորութեան արեւելեան մուտքը հսկող Նախճաւանի ամրոցների պաշտպանական խումբը<sup>18</sup>, հնարաւորութիւն են ունեցել մօտենալու Ոստան Հայոցի սահմաններին: Արեւելքից եւ հարաւից Ոստան Հայոցի տնտեսական եւ ռազմավարական նշանակութեան կարեւորագոյն հանգուցային տարածքը աքցանի մէջ առնելու

15 Քննուող արձանների գլուխների պատկերագրութեան վերծանման մասին տե՛ս Գ. Գ. Քոչարեան, Արտայայտչամիջոցների ռեաբանակալ վերլուծութեամբ թուագրման փորձ, էջ 154-161. նոյնի, Դուիմի մահարձանի պատկերագրութիւնը տեղեկատու վաւերագիր, էջ 94-99:  
16 Տե՛ս Գ. Քոչարեան, Անտիկ Դուիմը Արտաշատի պաշտպանական համակարգում, էջ 338:  
17 Վ. Ա. Իգումով, Լ. Լ. Կարագեօզեան, Ս. Գ. Հմայեակեան, Օձասարի սեպագիր արձանագրութիւնը, ՊԲՀ, 1997, թիւ 1, էջ 193-202:  
18 Նախճաւանի (Երասխի Ուրծ, Արփա, Նախճաւան վտակների հոսանքն է վեր ամրոցների գծային շարքերի ընդգրկումով) պաշտպանական խմբի մասին տե՛ս Գ. Քոչարեան, Անտիկ Դուիմը Արտաշատի պաշտպանական համակարգում, էջ 342-345:

շնորհիւ Ք. ա. 780-ականներին գործնականորէն սկիզբ էր դրուել Արարատեան գոգաւորութեան եւ այն եզերող նախալեռնային շրջանների լայնամասշտաբ նուաճումներին:

Իրաւամբ, այս արշաւանքով հիմնադրուած կործանուել եւ հրկիզուել էր Դուիմի «արքունի քաղաքը»՝ ամրաշինական, պաշտամունքային եւ արհեստագործական խոշոր կենտրոնն իր դամբարանադաշտով (Հմմտ. Մեծամօրի, Կարմիր բլուրի «արքունի քաղաքները» համաժամանակեայ աւերուած «հրեհուած շերտերը»)<sup>19</sup>: Էթիոպիկ նուաճելիս «արքունի քաղաքները» նկատմամբ Վանի թագաւորութեան ցուցաբերած նման դաժան վերաբերմունքն աներկբայօրէն պայմանաւորուած էր այս խոշոր կենտրոնների ռազմավարական ներուժն ուղղակիօրէն ճնշելուց զատ, նաեւ պաշտամունքային գաղափարական հզօր ընդդիմութիւնն է չիք դարձնելու անգիջում ձգտմամբ եւ նոր պետական կրօնը պարտադրելու նպատակադրմամբ: Կրօնական նման անհանդուրժողականութեան աստիճանական մեղմացման<sup>20</sup> ընթացքում գրաւուած ամրոց-բնակավայրերը վերականուցելու պարագայում անգամ Դուիմը չվերականգնուեց: Այս հանգամանքն ամենայն հաւանականութեամբ պայմանաւորուած էր բնական անառիկութեամբ Դուիմին գերազանցող՝ Երասխ եւ Մեծամօր գետերի կազմած եռանկիւնու (յետագայ Արտաշատի) բլրաշարի վրայ հզօր միջնաբերդով նոր քաղաքի հիմնադրմամբ<sup>21</sup>:

19 Տե՛ս Է. Վ. Խանգաղեան, Կ. Լ. Մկրտչեան, Է. Ս. Պարսամեան, Մեծամօր, էջ 56-57. К. X. Кушнарева, Древнейшие памятники Двина, с. 107-108:  
20 Ս. Գ. Հմայեակեան, Վանի թագաւորութեան պետական կրօնը, Երեւան, 1990, էջ 22-23:  
21 Նորակառոյց ուրարտական քաղաքի միջնաբերդի եւ քաղաքային թաղամասի մնացորդների մասին տե՛ս Բ. Ն. Առաքելեան, Արտաշատի 1979-1980 թթ. պեղումների հիմնական արդիւնքները, Հայկական ՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշ-

Արարատեան գոգաւորութեան պաշտպանական համակարգի յետագայ ձեւաւորման եւ կատարելագործման շարունակական ընթացքը թելադրուած էր Երասխի հովտում հայոց թագաւորական հարստութիւններէ կողմից արքայանիստ քաղաքների յաջորդական հիմնադրմամբ: Արքունիքի տեղափոխումը նոր նստավայր բնականօրէն յանգեցնում էր պաշտպանական համակարգի որոշակի սրբազրման:

Մեծ Հայքի վերամիաւորմանը, նրա քաղաքական անկախութեան ամրապնդմանը զուգընթաց Արտաշէս Առաջինը (Ք. ա. 189-160 թթ.) ձեռնամուխ եղաւ երկրում լայնածաւալ բարենորոգումների իրագործմանը: Նա Ք. ա. 170-ականներին մայրաքաղաքը Երուանդաշատից տեղափոխեց Երասխ եւ Մեծամօր գետերի կազմած եռանկիւնում գտնուող յիշեալ բլրաշարի վրայ նոր կառուցուած Արտաշատ<sup>22</sup>: Սրա՝ Ոստան Հայոց գաւառն ընդգրկող մերձքաղաքային տնտեսական տարածքը, գտնուելով միջազգային տարանցիկ առեւտրի մայրուղիների ճիւղաւորման խաչմերուկում, վերստին ստացաւ ռազմավարական եւ տնտեսական առանձնակի կարեւորութիւն: Երասխ, Մեծամօր, Ազատ գետերի արգաւանդ հովիտներում իրականացուող բնակավայրերի խտացման գործընթացն այս տարածքը վերածեց նորա-

տային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գեկուցումների թեզիսներ, Երեւան, 1981, էջ 19-20. Ժ. Դ. Խաչատրեան, Արտաշատի պեղումները, - Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդիւնքներին նուիրուած գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ, Երեւան, 1987, էջ 41-42. նոյնի, Հայաստանի անտիկ շրջանի պաշտպանական կառոյցները, ՊԲՀ, 1987, թիւ 1, էջ 162-163:

22 Տե՛ս Գ. Քոչարեան, Արտաշէս Ա. Բարին որպէս հզօր պետականութիւն կերտող (Կերպարային դիմանկարի վերականգնման փորձ), - «Գիտական աշխատութիւններ», III, Գիւմրի, 2000, էջ 22-25:

ստեղծ մայրաքաղաքի տնտեսական ներուժն ապահովող շտեմարանի<sup>23</sup>:

Արտաշէս Առաջինի ծաւալուն քաղաքաշինական գործունէութեան մէջ կարեւորում է Արարատեան գոգաւորութեան հարաւային եւ արեւելեան մուտքերով դէպի մայրաքաղաք տանող մայրուղիներին յարակից ամրաշինական կառոյցների վերականգնումն ու համալրումը<sup>24</sup>: Ստեղծուած իրավիճակում վերստին արժեւորուեց դեռեւս Ք. ա. Ը. դ. առաջին քառորդին հիմնովին կործանուած Դուին ամրոցի դիրքը՝ որպէս նորակերտ մայրաքաղաքի առաւել խոցելի հիւսիսային դարպասի մատոյցների պաշտպանութիւնը եւ Գառնի, Վարդգէսաւան, Սեւանի աւազան տանող ճանապարհների հանգոյցի վերահսկողութիւնն ապահովող ամրաշինական յենակէտ: Կենսական անհրաժեշտութեամբ վերակառուցուեց Դուին հնամենի ամրոց-սրբավայրը:

Բլրի՝ Ք. ա. Ժ.-Ը. դդ. եւ Ք. յ. Դ.-Ե. դդ. շերտերի միջեւ բացայայտուել է Արտաշիսեան ժամանակաշրջանի՝ Ք. ա. Բ. դ. - Ք. յ. Ա. դ. կէսի մշակութային շերտ<sup>25</sup> (0,30:1,50մ հզօրութեան): Բլրի լանջահա-

23 Հնագիտական ցիւրքերը Արտաշատի թիւում-քում՝ ներկայիս Վերին Արտաշատ, Նորաշէն, Ներքին Դուին, Հնաքերոյ, Քաղցրաշէն, Այգեգարոյ, Կանաչուտ, Դեղձուտ, Արեւշատ, Դիտակ գիւղերի տարածքում, ուրուագծում են անտիկ ժամանակաշրջանի բնակավայրերի խիտ ցանց (տե՛ս Գ. Քոչարեան, Ոստան Հայոց գաւառը Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածք, - «Լրաբեր հասարակական գիտութիւններ», 1998, թիւ 2, էջ 172-176):

24 Գ. Քոչարեան, Արտաշէս Ա. Բարին որպէս հզօր պետականութիւն կերտող (Կերպարային դիմանկարի վերականգնման փորձ), էջ 25-26, տե՛ս նաեւ նոյնի, Անտիկ Դուինը Արտաշատի պաշտպանական համակարգում, էջ 338:

25 Դուինի Արտաշիսեան ժամանակաշրջանի մշակութային շերտը ներկայացուած է ըստ՝ Գ. Քոչարեան, Անտիկ Դուինը ամրոց-սրբավայրից արքայանիստ քաղաք, - «Բանբեր հայագիտութեան» հայագիտական միջազգային հանդէս, 2014, թիւ 1(4), էջ 26-31:

յեաց մասերում՝ վերակառուցուած պարսպաօտու, դազաթի հարթակին, հատուածաբար բացուել են բնակելի-տնտեսական բնոյթի շինութիւնների աղճատուած մնացորդներ (սեան տորածեւ խարխիսներով կենտրոնական սրահի ու կից սենեակների, երկայնակի առանցքով ձգուած միջանցքի ու սրան յարող ճիւղաւորուած յարկաբաժինների քարաշէն հիմնապատեր, կաւածեփ կամ սալարկուած յատակներ, թոնիր, օջախներ, աղբահորեր): Յայտնաբերուել են կենցաղային գործածութեան բազմաբնոյթ խեցեղէն, քարէ սարք-յարմարանքներ, երկաթէ իրեր եւ այլն:

Բլրի հարաւարեւմտեան ստորոտին (Ք. ա. I հազ. սկզբից ի վեր յայտնի սրբավայրում) բացայայտուել են անտիկ պաշտամունքային կառոյցների ներկայութիւնը հաւաստող վաղմիջնադարեան հոգեւոր շինութիւններում զանգուածաբար կրկնակի օգտագործուած, սպիտակ աւազաքարէ, տուֆէ, բազալտէ, գրանիտէ ճարտարապետական մանրամասներ, սրբատաշ սալեր եւ ընտիր գունազարդ խեցեղէն:

Բլրի շրջակայքում ի յայտ են եկել համաժամանակեայ բնակավայրերի գոյութիւնը վկայող հետքեր, գտածոներ (խեցեղէն, խաղող ճգմելու տարապաններ, ապակէ սրուակներ, դրամներ) եւ կարասային թաղումներ:

Ք. յ. Ա. դ. կէսին Հայաստան ներխուժած հռոմէական զօրահրամանատար Կորբուլոնը, գրաւելով Դուին ամրոցը, Գառնիից Ազատ գետի կիրճով եւ Վարդգէսաւանից «բուն պողոտայով» դէպի Արտաշատ հայկական ուժերի տեղաշարժերը վերահսկելու, ինչպէս նաեւ Նախճաւանի կողմից պարթեւների հաւանական միջամտութիւնները կանխելու հնարաւորութիւն ստեղծեց: Ք. յ. 59 թ. գարնանը դէպի Տիգրանակերտ ռազմարշաւի նախօրէին թշնամին հզօր Արտաշատի եւ արքունի ամրոց Գառնիի հետ մէկտեղ աւերակների

կոյտի վերածեց սրանց մատոյցները հսկող Դուին ամրոց-սրբավայրը<sup>26</sup>:

Դուին ամրոցի եւ բլրի ստորոտի պաշտամունքային կառոյցների հիմնադատակ կործանման օրհասական պատկերը հնագիտորէն վաւերացուած է՝ մոխրառատ միջավայր, կարմրաշիկաւուն հող, քանդուած պատեր, հրդեհից թրծուած, վառ կարմիր գոյն ստացած հում աղիւսէ փրուածքներ, փայտէ կրող կոնստրուկցիաների ածխացած մնացորդներ, ջարդոտուած խեցանօթների մրապատ բեկորներ, մարդու գանգ, սեւացած ոսկորներ:

Ամայացած սրբավայրը ժամանակաւորապէս վեր է ածուել դամբարանադատի (վաղերկաթեդարեան հորիզոնների մէջ իջեցուկ կարասային թաղումներ՝ կմախքի մնացորդների, հասարակ խեցեղէնի, պարզունակ զարդեղէնի, հմայիլ-կնիքների պարունակութեամբ): Անհամաչափօրէն տեղաբաշխուած այս շարքային թաղումների շերտագրական տուեալները եւ գոյքակազմի թուագրութեան վերին սահմանագիծը Ք. յ. Ա. դարի վերջից ոչ ուշ են:

Ք. յ. Բ. դ. 60-ական թուականներին Հայաստան ներխուժած հռոմէացիների համար Վաղարշապատ-Արտաշատ-Գառնի զօրակայանների միջեւ հաղորդակցութեան անվտանգութիւնն ապահովում էր «բուն պողոտային» յարող Դուինի սրբավայրում տեղադրուած հռոմէական բանակի բենեֆիցիարիուսների ուղեցոյց-ուղեկալ պաշակակէտը (statio)՝ իրեն բնորոշ պաշտամունքային կառոյցով եւ «յաւերժական», «անյաղթ» դիցամարտիկ Sol Invictus Միթրային ձօնուած զոհասեղանով<sup>27</sup>:

26 Տե՛ս մանրամասն եւ համապատասխան գրականութիւն՝ նոյն տեղում, էջ 31-32:

27 Արեւմտեան միթրայիզմի բնորոշ պատկերագրութեամբ կերտուած զոհասեղանի բարձրաքանակ խորհրդապատկերների՝ Միթրա<արեւագուստ-ցուլ-կարիճ իմաստաբանական շրջայի եւ համաժամանակեայ հնագիտական ցիւրքերի մասին տե՛ս Գ. Քոչարեան, Դուինը վաղ Արշա-

Վաղարշապատն Արտաշատին կապող «բուն պողոտային» յարող Դուին ամրոց-սրբավայրի ռազմական ու տնտեսական նշանակալի ներուժը եւ պաշտամունքային մեծ հեղինակութիւնը կանխորոշող նախադրեալներ հանդիսացան Խոսրով Կոտակի կողմից Դ. դ. 30-ական թուականներին արքունիքը Արտաշատից Դուին տեղափոխելու համար<sup>28</sup>: Արքայի՝ նման վճռորոշ քայլի բուն պատճառը կենտրոնացումն ուժեղ իշխանութեան կայացմանը խոչընդոտող ներքաղաքական ծայրայեղ անկայուն մթնոլորտն էր<sup>29</sup>:

Խոսրով Կոտակն իրականացրեց մի ամբողջութիւն կազմող քաղաքաշինական կռու մտայղացում՝ Դուին (արքունի նստավայր) + Խոսրովակերտ (արքայական ծառագարդ ապարանք-անտառապուրակ) + Տաճար մայրի (արքայական կաղնատունկ անտառ-արգելոց) = արքայանիստ համալիր կառոյց:

Միջնաբերդում բլրի գագաթի արեւելեան մասում, անտիկ շերտի վրայ բացուել են Դ-ն դդ. «Արշակունեաց գահադահլիճի»<sup>30</sup> մնացորդները (եռանաւ սրահի հատուածաբար պահպանուած՝ կրկնակի օգտագործուած սեւ, շիկաւուն տուֆից սպիտակ աւազաքարից սրբատաշ սալերով շարուած հիմնապատեր, սիւնախարիսխների

քառանկիւն հարթակներ, կիսաշրջան յատկագծով կենտրոնական «գահաւորակ», ստորին հորիզոնում՝ կաւածեփ, իսկ վերինում՝ կրաշաղախ յատակներ եւ տուֆից սիւնախարիսխ), սրան կից՝ 17մ խորութեան հոր (Դ. դ. ծածկի կղմինդրի մի քանի հարիւր բեկոր եւ խեցանօթներ, ապակէ թասերի բեկորներ)<sup>31</sup>: Գագաթի արեւմտեան մասում՝ Ք. յ. Ա. դ. կէսին աւերուած անտիկ կառոյցի քարաշէն հիմքերի վրայ, փաստագրուել են նոյն յատկագծով Դ.-ն. դդ. վերակառուցուած մեծ շինութեան հում աղիւսէ պատերի, սալածածկ յատակների, կղմինդրածածկ տանիքի մնացորդներ:

Պատմաքաղաքական իրադրութեամբ թելադրուած՝ Սասանեանների տիրապետութեան դէմ ազգային-ազատագրական համաժողովրդական պայքարում ստեղծուած միաբանութիւնը պահպանելու, յարաբերական անկախութիւնը ամրապնդելու ձգտմամբ Գիւտ Արահեզացի կաթողիկոսի օրօք (461-478) հայրապետական արժող Վաղարշապատից տեղափոխուեց Դուին<sup>32</sup>:

Բլրի հարաւարեւմտեան ստորոտին՝ հնաւանդ սրբավայրում, բացայայտուել է նոր դաւանանքի՝ Ժ.-ն. դդ. հետզհետէ ձեւաւորուող նշանակալի կենտրոններից մէկը: Յայտնաբերուել են զանգուածաբար կրկնակի օգտագործուած սրբատաշ սալերով շարուած Սբ. Գրիգոր Լուսաւորիչ կաթողիկէ եւ միանաւ բազիլիկ եկեղեցիների, Ե եւ Է դարերի կաթողիկոսական պալատների մնացորդներ, ինչպէս նաեւ՝ հոգեւոր անձանց թաղումներ, յուշակոթողներ, թեւաւոր խաչեր, տնեսական բնոյթի կառոյց-

կունեաց շրջանում (Ուրվագծման փորձ), - ՊԲՀ, 2002, թիւ 13, էջ. 206-213:  
 28 Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, թարգմ., Գեղարք. Եւ Տանօթ. Ստ. Մալխասեանի, Երեւան, 1990, III, Ը, էջ 170:  
 29 Մանրամասնութեամբ տե՛ս Գ. Քոչարեան, Դուինի պատմութեան շրջադարձային հանգրուանը, «Հանդէս ամսօրեայ», 2007, թիւ 1-12, էջ 205-212:  
 30 Ըստ 1960-1961 թթ. պեղումների արդիւնքների՝ Արշակունիների վերագրուող Դ. դ. գահաձիստ դահլիճ (տե՛ս Կ. Ղաֆադարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, հտ. II, էջ 89-96), ըստ 1985 թ. պեղումների արդիւնքների՝ վաղքրիստոնէական հայկական եկեղեցի (տե՛ս A. Kalantarian, Dvin. Histoire et Archéologie de la ville Médiévale, Paris, 1996, p. 63-66):

31 Գ. Քոչարեան, Դուինի վաղմիջնադարեան կղմինդրը որպէս թուագրման գործօն, - «Բանբեր Երեւանի համալսարանի», Հայագիտութիւն, 2016, թիւ 2(20), էջ 28-30:  
 32 Գիւտ Արահեզացի կաթողիկոսի օրօք հայրապետական արժող Վաղարշապատից Դուին տեղափոխելու խնդրի շուրջ տե՛ս Կ. Ղաֆադարեան, Դուին քաղաքը եւ նրա պեղումները, հտ. I, Երեւան, 1952, էջ 115-118:

ներ, ջրատար խողովակաշարերի ճիւղաւորուած համակարգ եւ այլն:

Բլրի մերձակայ գիւղերն աստիճանաբար միաւորուեցին՝ կազմելով քաղաքայնացող բնակավայրի պարսպապատ թաղամասերը, իսկ միւսները՝ նրա արուարձանները: Թաղամիջեան կաւակերտ պարիսպների մնացորդներ են փաստագրուել ներկայիս Վերին Արտաշատ, Բերդիկ, Հնաբերդ, Այգեստան, Ներքին Դուին գիւղերի տարածքում<sup>33</sup>:

Մայրաքաղաքի դերն Արտաշատից Դուինին անցաւ դանդաղօրէն՝ Վաղարշապատի հետ փոխնիփոխ արքայանիստ լինելուց յետոյ: Երկրում տեղի ունեցող իրադարձութիւններով պայմանաւորուած՝ Ոստան Հայոց գաւառը շարունակեց մնալ Արարատեան գոգաւորութեան պաշտպանական համակարգի նշանակալի օղակներից մէկը: Երբեմնի մայրաքաղաք Արտաշատն աստիճանաբար վերածուեց նոր մայրաքաղաք Դուինի մատոյցները պաշտպանող գիւղաքաղաք-ամրոցի<sup>34</sup>: Արտաշատի մերձքաղաքային տնտեսական տարածքը, որը Դուինի հետ կազմում էր վարչատնտեսական մի ամբողջութիւն, «Աշխարհացոյցում» ներկայանում է որպէս Ոստան Դրւնոյ<sup>35</sup>: Արդէն Ե դ. վերջին քառորդին Դուինը քաղաքական ինքնուրոյնութիւնը պահպանած մարզպանական Հայաստանի վարչաքաղաքական եւ մշակութային կենտրոնն էր, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրը, առաջաւորասիական տարանցիկ առեւտրի կարեւորագոյն հանգուցակէտը:

33 Տե՛ս նոյն տեղում, էջ 30-35:  
 34 Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի եւ Ստ. Մալխասեանի, Երեւան, 1982, Գ, ԿԷ, ՀԸ, էջ 292, 349:  
 35 Ս. Տ. Երեմեան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի (Փորձ VII դարի հայկական քարտէզի վերակազմութեան ժամանակակից քարտէզաբանութեան հիմքի վրայ), Երեւան, 1963, էջ 49, 74:

Այսպիսով՝ Դուինի ցարդ փաստագրուած՝ Ք. ա. III հազ., Ք. ա. Ժ.-Ը. դդ., Ք. ա. Բ. - Ք. յ. Ա. դդ., Ք. յ. Բ. եւ Դ.-Ե. դդ. մշակութային շրջափոխների քննութիւնը բացայայտում է հնավայրի կազմաւորման պատմութեան շարունակական ընթացքը, որը պայմանաւորուած էր նրա կենսագործունէութիւնն ապահովող փոխկապակցուած մի շարք քաղաքաստեղծ գործօններով:

- ա) աշխարհագրական, բնակլիմայական, տեղագրական բարենպաստ միջավայր,
- բ) ռազմավարական եւ պաշտամունքային անվերապահ հեղինակութիւն հաւաստող՝ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութիւն խորհրդանշող, ամրոց-սրբավայր զոյգի տեւական համագործութիւն,
- գ) բազմագործառոյթ կենտրոնի դերի աւանդական իրողութիւն:

Դուինը եւ Արտաշատը փոխնիփոխ առեւտրատնտեսական եւ ռազմավարական առանցքային դեր են ունեցել Արեւելք-Արեւմուտք միջազգային տարանցիկ առեւտրի հիւսիսային մայրուղու վրայ: Արտաշխեսանների իրականացրած՝ երկրի քաղաքայնացման եւ քաղաք-ճանապարհ համակարգի կազմաւորման գործընթացում Արտաշատն իր մերձքաղաքային տարածքով մշտապէս կարեւորագոյն նշանակութիւն է ունեցել: Ստեղծուած բարենպաստ իրավիճակով թելադրուած մետաքսի Մեծ ճանապարհի ձեւաւորուող երթուղիներից մէկն անցել է Էկրատանից Արտաշատ, ապա ճիւղաւորուելով՝ դէպի Կողքիս (Փասիս, Դիոսկուրիա) եւ Փոքր Ասիա (Պոնտական Կոմանա)<sup>36</sup>: Սրանով վերաարժեւոր-

36 Ներկայացուած երթուղու մասին մանրամասն տե՛ս Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), Ереван, 1954, с. 57-62. տե՛ս նաեւ М. Зардарян, Коммуникационная ось "Юг-Север" в системе внешних связей Армянского нагорья (I тыс. до н.

րուել է միջազգային տարանցիկ առեւտրի հնուց ի վեր գործող մայրուղին: Առաջաւորասիական տարանցիկ առեւտրի կարեւորագոյն հանգուցակէտի դերը Արտաշատից արքայանիստ Դուրինին է փոխանցուել աստիճանաբար նրա քաղաքայնացմանը համընթաց<sup>37</sup>:

Դուրինի տնտեսական եւ քաղաքական բարգաւաճման շարունակականութիւնը՝

ամբողջ-սրբավայրից մինչեւ արքայանիստ քաղաք-մայրաքաղաք, այն է՝ նրա կայացման հաստատուն ընթացքը, պայմանաւորուած էր քաղաքակրթական շփումների՝ ռազմական, առեւտրատնտեսական, մշակութային առնչութիւնների լայն ոլորտ ընդգրկող պատմաաշխարհագրական բուն միջավայրի առանձնայատուկ ներուժով:

37 Յ.՝ «Армянский гуманитарный вестник», вып. 2/3-1, Москва, 2009, Ереван, с. 55-56.  
 37 Պրոկոպիոս Կեսարացու (Ջ դ.) վկայութեամբ՝ Դուրինի մերձակայ մարդաշատ գիւղերը բնակեցուած են եղել առեւտրականներով: Հնդկաստանից, հարեւան Վիրքից ու պարսիկների եւ Անտիոքի հոռմէացիների հպատակութեան ներքոյ գտնուող գրեթէ բոլոր տեղերից այստեղ են բերուել ապրանքներ, որոնցով նրանք առեւտուր են արել» (Օտար աղբիւրները Հայաստանի ու հայերի մասին, 5, «Բիզանդական աղբիւրներ», Ա., Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանութիւն բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Հ. Բարթիկեանի, Երեւան, 1967, էջ 142). տե՛ս նաեւ Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (V в. до н. эры-XV в. н. эры), с. 109-111; А. Kalandarian, Dvin. Histoire et Archéologie de la ville Médiévale, p. 87-95.

ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԻՍԱՏՐԱՊՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՔԸ  
 Ք. Ա. Զ.-Դ. ԴԱՐԵՐՈՒՄ

Յովհաննես Խորիկեան

Հերոդոտոսը, անդրադառնալով Աքեմենեան պետութեան II սատրապութեանը, գրում է. «...Միւսիացիներից, լիւդիացիներից, լասոններից, կաբալներից եւ հիւտէններից (ստացւում էր) հինգ հարիւր տաղանդ. այս էլ երկրորդ նահանգն էր»<sup>1</sup>: Հերոդոտոսը եւս մի քանի անգամ տարբեր առիթներով յիշատակում է II սատրապութեան տարածքում գտնուող ցեղերին: Ստորեւ կը քննենք ոչ միայն Հերոդոտոսի, այլեւ միւս հին աղբիւրների տեղեկութիւնները յիշեալ ցեղերի եւ նրանց բնակեցրած երկրների վերաբերեալ:

Միւսիացիներ: Ըստ Հերոդոտոսի՝ միւսիացիները եւ լիւդիացիները այլ ժողովուրդների հետ բնակուել են Հալիւս գետից արեւմուտք ընկած շրջաններում եւ ենթադրուել են Կրեսոսի իշխանութեանը<sup>2</sup>: Պատմիչը յիշատակում է Միւսիայի Օլիմպոս լեռը<sup>3</sup>: Նա նաեւ յայտնում է, որ կարիացիները, միւսիացիները եւ լիւդիացիները սերել են Կարոս, Միւսոս եւ Լիւդոս եղբայրներից, ընդ որում՝ Միւլասայում Կարեան Զեւսի սրբավայրը պատկանել է միւսիացիներին եւ լիւդիացիներին<sup>4</sup>: Քսերքսէսի Հելլադա արշաւող բանակի կազմում միւսիացիները եւ լիւդիացիները յիշատակուում են միասին. «Լիւդիացիների զէնքերը շատ նման էին հելլենականներին: Լիւդիացիները հնում կոչուել են մէյոններ, իսկ Ատիւսի որդի Լիւդոսից յետոյ փոխեցին իրենց անունը

եւ կոչուեցին նրա անունով: Միւսիացիներն իրենց գլխին դնում էին տեղական սաղաւարտներ. նրանք կրում էին փոքր ասպարներ եւ ծայրերը խանձած տէգեր: Սրանք լիւդիական վերաբնակիչներ են եւ Օլիմպոս լեռան անունից կոչուում են օլիմպոսեաններ: Լիւդիացիների եւ միւսիացիների առաջնորդն էր Արտափրենէսի որդի Արտափրենէսը, որը Դատիսի հետ ներխուժել էր Մարաթոն»<sup>5</sup>: Փաստօրէն, Հերոդոտոսը կրկին միւսիացիներին եւ լիւդիացիներին վերագրում է ցեղային ընդհանրութիւն՝ միաժամանակ միւսիացիներին Օլիմպոս լեռան անունով անուանելով օլիմպոսեաններ: Միւսիացիները պարսկական բանակի կազմում յիշատակուում են նաեւ Պլատէայի ճակատամարտի կապակցութեամբ<sup>6</sup>: Ատառնէոն անունով վայրը՝ Կալէթիփէն Դիկիլիի մօտ, եւ Կայկոս դաշտը յիշատակուած են Միւսիայում՝ Լեսբոսին հանդիպակաց<sup>7</sup>: Սակայն Ատառնէոնը՝ ներկայիս Դիկիլիի մօտ<sup>8</sup> եւ Կայկոս գետի՝ ներկայիս Բակիրչայի ստորին հոսանքի շրջանը գտնուել են I սատրապութեան տարածքում եւ կապ չունեն II սատրապութեան Միւսիա երկրի հետ:

Լիւդիացիներ: Լիւդիացիները մինչեւ պարսիկների կողմից նուաճուելը ստեղծել էին ուժեղ եւ ընդարձակ պետութիւն, որը մեղական տէրութիւնից բաժանուած էր

1 Հերոդոտոս, Պատմութիւն ինը գրքից, թարգմանութիւնը Ս. Կրկեաշաղեանի (այսուհետեւ՝ Հերոդոտոս), Երեւան, 1986, III, 90:  
 2 Նոյն տեղում, I, 28:  
 3 Նոյն տեղում, I, 36, 43:  
 4 Նոյն տեղում, I, 171:  
 5 Նոյն տեղում, VII, 74: Ատիւսի որդի Լիւդոսի մասին տե՛ս նաեւ I, 7:  
 6 Նոյն տեղում, IX, 32:  
 7 Նոյն տեղում, I, 160; VI, 28; VIII, 106:  
 8 Dictionary of Greek and Roman Geography, ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854, pp. 252-253.